

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԲԱՌԱՑԻ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔ


Թարգմանության պատմությունն սկսվում է քաղաքակրթության պատմությունից: Բաբելոնյան աշտարակաշինության առասպելն էլ կարող է ցույց տալ, թե որքան կարևոր է եղել տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև հաղորդակցությունը, անգամ հին ժամանակներում:

Թարգմանությունը հայ գրականության զարգացման գործում և նաև ժողովրդի քաղաքական կյանքում առանձնահատուկ դեր է կատարել: Բավական է ասել, որ Հայաստանում դարերի ընթացքում ամեն տարվա հոկտեմբեր ամսին նշվել է «Թարգմանչաց տոնը»: Հայ թարգմանության արվեստի ամենափայլուն դրվագներից մեկը Աստվածաշնչի թարգմանությունն է, որը կատարել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և նրա աշակերտները: Գնալով գեղարվեստական թարգմանության դերը ավելի ու ավելի է հայ ժողովրդի մշակույթի և գրականության պատմության մեջ:

Անհնար է գրականությունը պատկերացնել առանց թարգմանության, որն իրար է մոտեցնում տասնյակ լեզուներով ստեղծվող գրականություններ: Գեղարվեստական թարգմանությունը մնում է իբրև գրականությունների փոխադրեցության և փոխհարստացման գլխավոր միջոց, և նրա դերը գնալով մեծանում է: Գեղարվեստական գրականության թարգմանությունը ժողովուրդների բարեկամության ամրապնդման անփոխարինելի միջոցներից մեկն է:

Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունն ինքնին բարդ և բազմաստիճան գործընթաց է, որին բնորոշ են մի շարք կանոններ, որոնցից կարևորագույնն այն է, որ թարգմանող երկի գործառությանին ոճն ունի իր բնորոշ հատկանիշները, որոնք հնարավոր չէ հաշվի չառնել ցանկացած գեղարվեստական երկի թարգմանության ընթացքում: Քանի որ գեղարվեստական թարգմանությունն արտացոլում է թարգմանչի ոչ միայն քերականական, հնչյունաբանական, ոճաբանական, բառագիտական գիտելիքների ամբողջությունը, այլև երկրագիտական, պատմամշակութային անցյալի և ներկայի իմացությունը, ուստի թարգմանելուց առաջ թարգմանիչը պետք է ուսումնասիրի տվյալ հեղինակի ողջ ստեղծագործությունը, պատկերացում ունենա դարաշրջանի բարոյահոգեբանական տրամադրության, գեղագիտական-մշակութային արժեքների էության մասին:

Թարգմանության հնչյունաբանական և ոճաբանական նրբությունները կարևորվում են այնքանով, որ նրանց միջոցով են արտահայտվում թարգման-



վող երկի երաժշտությունը, ռիթմը և առաջին հայացքից աննկատելի թվացող հնչողական այլ առանձնահատկություններ:

Գեղարվեստական տեքստի թարգմանության արժեքը բնորոշվում է երկի առարկայական – տրամաբանական բովանդակության, ինչպես նաև ձևի յուրահատկության՝ թարգմանվող լեզվով *լիակատար* փոխանցելու հմտությամբ: Այս առնչությամբ հետաքրքիր է այն փաստը, որ Լև Տոլստոյը նամակներից մեկում նկատել է, թե իր որևէ ստեղծագործության բովանդակությունը բացատրելու համար այդ ստեղծագործությունը նորից պետք է գրի. «...Առանձին բառերով արտահայտված յուրաքանչյուր միտք կորցնում է իր իմաստը և սարսափելի ցածրացնում է երկի որակը...»¹:

Թարգմանիչը պետք է այնքան հմուտ լինի և այնքան լավ տիրապետի թարգմանության բոլոր տեսակներին, որ կարողանա լավ կողմնորոշվել, թե որ տեսակը կիրառի ստեղծագործության այս կամ այն հատվածում:

Թարգմանչի խնդիրը նաև այն է, որ կարողանա վերստեղծել տվյալ երկի գեղարվեստական բովանդակությունն այլ լեզվով, որը գրեթե անհաղթահարելի դժվարություն է թվում ամեն անգամ, այսինքն թարգմանիչը պետք է լինի նույնքան տաղանդավոր, որքան գրողը:

Թարգմանության հարազատությունը բնագրին հասկացվում է տարբեր կերպ, թեպետ ոչ ոք չի ժխտել հարազատության անհրաժեշտությունը: Կան թարգմանության տարբեր տեսակներ, որոնք հիմնականում բաժանվում են երեք խմբի՝ ազատ, բառացի և համարժեք թարգմանություններ: Սրանցից ամեն մեկը ժամանակի տվյալ ազգային գրականության զարգացման պահանջներին համապատասխան առաջատար դիրք է գրավել այս կամ այն դարաշրջանում:

Հանգում ենք այս փաստին, որ թարգմանության տեսակների նշանակությունը կարելի է հասկանալ պատմական մոտեցմամբ: Սա նշանակում է ցույց տալ թե բառացի, ազատ և համարժեք թարգմանություններն իբրև տիրապետող ձևեր, ինչպես են հաջորդում միմյանց:

Գեղարվեստական թարգմանության տեսության մեջ շատ գիտնականներ են անդրադարձել թարգմանության տեսակների դասակարգմանը, որոնց թվում են Վ. Գյոթեն, Վ. Վինոգրադովը, Լ. Բարխուդարովը, Պ. Կոպանյովը, Ա. Եղիազարյանը և այլն:

Վ. Գյոթեն իր «Թարգմանություններ» հոդվածում խոսում է թարգմանության տեսակների մասին: Գյոթեի հոդվածի ամենամեծ արժանիքն այն է, որ նա թարգմանության տեսակները դիտում է զարգացման ընդհանուր շղթայի մեջ, որոնք հանգեցնում են թարգմանության բարձրագույն տեսակին:²

¹ Лева Толстой о литературе, Москва, 1955 стр. 155

² Ст'я Мачеромбо перевода, Москва, 1986 стр. 235-236

Ամերիկացիները *բառացի, ազատ և համաժեշտ* թարգմանությունների առանձնահատկություններին:

Բառացի թարգմանությունը կարող է ընդգծել թարգմանվող ստեղծագործության որոշ առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունների հստակ գիտակցումն առաջ է բերում թարգմանվող ստեղծագործությունների ավելի խորը ընկալման անհրաժեշտություն, որը և մղում է դեպի թարգմանության մի նոր մակարդակ: Այսինքն՝ ընթերցողի ստացած տեղեկությունների քանակը կվերաճի որակի - դա կլինի արդեն *համաժեշտ* թարգմանություն: Միայն այս տիպի թարգմանություններն են, որ բնագիրն իր անկրկնելիությամբ, իր ամբողջությամբ մատչելի են դարձնում թարգմանությունն ընթերցողին:

Այստեղ կարելի է նաև նշել մի շատ հետաքրքիր աշխատության մասին՝ Մ. Գասպարովի «Բոլորովին և բառացի թարգմանությունները» հոդվածը: Այստեղ հիմնականում նշվում է թարգմանության երկու տեսակի մասին՝ բառացի և ազատ: Մ. Գասպարովն ասում է. «Օգտավետ է պարզ պատկերացնել այս երկու միտումները: Դա ավելի լավ է, քան դեսուդեն ընկնելը, հակվելով մեկ դեպի մի կողմ, մեկ՝ մյուս կողմ, - որովհետև, ինչպես հայտնի է, ոսկե միջինն անհասանելի բան է»³:

Այսպիսով Մ. Գասպարովը չի ընդունում համարժեք թարգմանությունը: Ըստ նրա ընթերցողների մեծ մասը բավարարվում է թարգմանված ստեղծագործության մասին ամենաընդհանուր պատկերացումով, որը տալիս է ազատ թարգմանությունը: Բառացի թարգմանությունն այն փոքրաթիվ ընթերցողների համար է, որոնք ուզում են ստանալ ավելի ճշգրիտ տեղեկություններ բնագրի մասին:

«Բառացի թարգմանություն» բնորոշումը քննադատների մեծ մասի կողմից օգտագործվում է գլխավորապես իբրև բացասական գնահատական թարգմանությունների մասին խոսելիս: Ահա թե ինչ է գրել Ա. Եղիազարյանը բառացի թարգմանության մասին «Բառացի թարգմանությունը թարգմանվող երկի բառացի հարազատությունն է, որն ավերում է կամ պարզապես չի հաղորդում գեղարվեստական տպավորությունը, գեղարվեստական ամբողջությունը»⁴:

Բայց նաև հարկ է նշել, որ թարգմանաբանության մեջ բառացի թարգմանությունները կարևոր դեր են խաղացել: Դրանք անհրաժեշտ աստիճաններ են եղել ազատ թարգմանություններից հետո թարգմանվող ստեղծա-

³ Мастерство перевода, Москва, 1971 стр. 102

⁴ Ա. Եղիազարյան, Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, Երևան, 1977, էջ 100:

գործությունների առանձնահատկությունները հասկանալու, իմաստավորելու և վերստեղծելու համար:

Վերջին հաշվով, բառացի թարգմանությունն ի վիճակի չէ ամբողջական գաղափար տալ բնագրի մասին: Այդտեղ փաստորեն բացակայում է գեղարվեստական բովանդակությունը: Արշակ Չոպանյանը, ով թարգմանություններ է կատարել նաև Ֆրանսերեն լեզվից և արժանացել է Ֆրանսիական պարգևին՝ «Պատվո լեգեոնի» շքանշանին, իր «Թարգմանության արվեստ» հոդվածում այսպիսի համեմատություն է անում. «Տառական թարգմանությունը կնամանի սպանված ու զոհված ամասուններու, զոր բնական գիտությանց մուսեղներու մեջ կցուցադրվի»⁵:

Ա. Չոպանյանը, մերժելով բառացի թարգմանությունները, նույն վճռականությամբ մերժում է նաև ազատ թարգմանությունները և նույն հոդվածում գրում է. «Երբ թարգմանվածն ինքնատիպ ու գիտակից մեծ հեղինակի մը գործն է, ինչպես Շեքսպիրի մը գործը, - թարգմանիչը կարելի եղածի չափ պետք է ջանա վերարտադրել ոճը»:

Բայց այնուամենայնիվ ազատ թարգմանությունները շատ ավելի մեծ տեղ են գրավում գեղարվեստական գրականության մեջ, քան սովորաբար ընդունված է կարծել: Բազմաթիվ դասական ստեղծագործություններ, որոնք կազմում են այս կամ այն գրականության զարդը, ազատ թարգմանություններ են: Եվ երբեմն այնքան տարօրինակ է թվում, որ մանկուց ծանոթ ու հարազատ երկը հանկարծ հայտարարվում է թարգմանություն: Կան թարգմանությունների մի տեսակ, որի մասին խոսելիս կիրառվում է «բանաստեղծի ստեղծագործական անհատականության աղավաղում» արտահայտությունը: Այդ ոչ հաճելի զնահատականը տրվում է այն դեպքում, երբ թարգմանիչը, չստեղծելով ինքնուրույն գոյության իրավունք ունեցող գործ, միաժամանակ կամայականության հասնող ազատություն է ցուցաբերում բնագրի նկատմամբ:

Թարգմանությունը չի կարող նույնությամբ վերարտադրել բնագրի առանձնահատկությունները, բայց միշտ ի վիճակի է տալ նրանց համարժեքները: Դեռն այս է գեղարվեստական թարգմանության կարևորագույն խնդիրը:

Ըստ իս՝ համարժեք թարգմանության կարևորագույն պայմաններից մեկն է՝ թարգմանությունն ընկալել իբրև տվյալ գրականության լիարժեք գործ: Այսինքն՝ թարգմանիչը պետք է գործի դնի իր ներքին ստեղծագործական անհատականությունը: Մյուս կարևոր պայմանն է՝ հարազատորեն վերարտադրել թարգմանվող նյութի ինքնատիպությունը, ոճը:

⁵ Չոպանյան Ա., Թարգմանության արվեստ, «Անահիտ», 1902, N12, էջ 218:

Համարժեք թարգմանությունը բառացի և ազատ թարգմանության «ոսկե միջինն» է: Նախապես արդեն նշվել է, որ թարգմանիչը պետք է հմուտ լինի և կարողանա ճիշտ կողմորոշվել, թե երկի որ մասում թարգմանության որ տեսակը գործածի:

Թարգմանությունը, որը կատարված է անհրաժեշտ մակարդակով, համարվում է համարժեք այն դեպքում, երբ տեքստի բովանդակությունը թարգմանվել է և՛ թարգմանվող լեզվի չափանիշներին և՛ թարգմանաբանության առաջացրած սկզբունքներին համապատասխան:

Մեր ժամանակներում, երբ թարգմանչի մասնագիտությունը դարձել է մասսայական, և երբ թարգմանության հետ ստիպված են առնչվել բոլորը, ովքեր այսպես թե այնպես կապված են օտար լեզուների ուսուցման կամ այնպիսի աշխատանքների հետ, որոնք պահանջում են օտար լեզուների իմացություն, ծանոթությունը թարգմանաբանության տեսության առանձնահատկությունների հետ, անհրաժեշտ է: Միշտ պետք է հիշել այն փաստը, որ «...թարգմանությունը ավելի է, քան գիտությունը: Դա նաև կարողություն է, իսկ լիարժեք որակով կատարված թարգմանությունը, ի վերջո, միշտ համարվում է նաև արվեստ»⁶:

Օգտված գրականության ցանկ

1. Եղիազարյան Ա., Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, Երևան, 1977
2. Չոպանյան Ա., Թարգմանության արվեստը, Անահիտ, էջ 218-220, 1902, N12
3. Бархударов Л., Язык и перевод, Москва, 1975.
4. Виноградов В., Лексические вопросы перевода художественной прозы, Москва, 1978.
5. Гачечеладзе Г., Художественный перевод и литературные взаимосвязи, Москва, 1980.
6. Гачечеладзе Г., Вопросы теории художественного перевода, Тбилиси, 1964.
7. Копанев П., Вопросы истории и теории художественного перевода, Минск, 1972.
8. Л. Толстой о литературе, Москва, 1955.
9. Толстой С., Основа перевода, Москва, 1957.
10. Русские писатели о переводе, Ленинград, 1960.
11. Caltford J., A Linguistic Theory of Translation, London, 1965.
12. Neda E. and Taber Ch., The Theory and Practice of Translation, London, 1970

⁶ Neda E. and Taber Ch. The Theory and Practice of Translation.